ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____ Ռ. Սարգսյան
«03» 03. 2025թ.

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) Մանկավարժական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ձևավորման, գործունեության և իրավասությունների ընթացակարգը:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Քոլեջի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.3. Խորհրդի կանոնակարգում լրացումներ, փոփոխություններ կատարվում է Քոլեջի Տնօրինական խորհրդի կողմից:

1.4. Խորհուրդը ձևավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում:

1.5. Խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

1.6. Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրություններով:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄԸ

Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է հետևյալ սկզբունքով՝

2.1. Քառասուն մանկավարժներից ավելի համակազմ ունենալու դեպքում քոլեջի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են՝ տնօրենը, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենները, պրակտիկայի ղեկավարը, ամբիոնների վարիչները, յուրաքանչյուր ամբիոնից մեկական առաջատար մասնագետ, կուրսղեկները, մեթոդական միավորումներից /եթե առկա է/ առաջադրված 3-5 մանկավարժները, ուսանողական խորհրդի նախագահը:

2.2. Մինչև քառասուն մանկավարժներից կազմված համակազմի դեպքում քոլեջի բոլոր մանկավարժական աշխատողները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ:

2.3. Խորհրդի նախագահը քոլեջի տնօրենն է, իսկ քարտուղարին ընտրում են ձևավորված կազմից:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Մանկավարժական խորհուրդը քոլեջի կրթական գործընթացի կազմակերպման, կառավարման և զարգացման կոլեգիալ խորհրդակցական մարմինն է: Այն

քննարկում, լրամշակում և երաշխավորում է ռազմավարական զարգացման ծրագիրը՝ այն ներկայացնելով Տնօրինական խորհրդի հաստատմանը:

3.2. **Մանկավարժական խորհրդում քննարկվող կրթական ծրագրերի և ուսուցման գործընթացի հիմնական հարցերը՝**

- պետական կրթական չափորոշիչներին համապատասխան նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի ներդնումը,
- գործող կրթական ծրագրերի մշտադիտարկումը, վերանայումը և արդյունավետության գնահատումը,
- ուսուցման բովանդակությունը, ուսումնառության որակը և կրթական արդյունքների ապահովումը,
- արտալսարանային և ուսումնական գործընթացին առնչվող այլ աշխատանքների կազմակերպումը,
- սովորողների համակողմանի զարգացումը, հակումների և ընդունակությունների բացահայտումը և զարգացումը, նրանց կյանքի և առողջության պահպանման ապահովումը,
- կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական ծառայությունների կազմակերպումը:

3.3. Մանկավարժական խորհրդում քննարկվող վերահսկողական և հաշվետվական ուղղությունները՝

- ուսումնադաստիարակչական աշխատանքների և ընդունելության գործընթացի արդյունքները,
- մանկավարժական խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների (ամբիոնների, ուսումնամեթոդական և ուսումնադաստիարակչական օղակների) և ուսանողական ինքնակառավարման մարմնի աշխատանքային պլանների իրականացումը և գործունեության արդյունքները,
- ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը,
- տնօրինական գրավոր աշխատանքների և բաց դասերի արդյունքները,

- մեթոդական աշխատանքների ընթացքը և կատարողականը, մատենավարության վիճակը,
- պետական քննությունների նախապատրաստման աշխատանքները, պետական քննական հանձնաժողովների նախագահների և ամբիոնների վարիչների հաշվետվությունները,
- մանկավարժական խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարողականը:

3.4. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

- ✓ Քոլեջի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
- ✓ օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսում կիրառելու մասին,
- ✓ Քոլեջի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի շուրջ,
- ✓ հաստատում է ուսումնական հաստատության աշխատողներին տրվող պարգևատրումների ցանկը և չափը,
- ✓ քննարկում է սովորողների, ինչպես նաև նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների դիմումները, առաջարկությունները կամ բողոքները,
- ✓ քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության դասացուցակներին, օրակարգերին, ոչ հանրակրթական ծրագրերին ու ուսումնական հաստատության աշխատանքային ծրագրերին:

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Խորհրդի աշխատանքը ղեկավարում է քոլեջի տնօրենը, որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է:

4.2. Նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

5.1. Խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է խորհրդի արձանագրությունների բարեխիղճ կազմման համար:

5.2. Նիստի արձանագրությունը կազմվում է եռօրյա ժամկետում, ստորագրվում և վավերացվում է Խորհրդի նախագահի կողմից:

5.3. Մանկավարժական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է բաց նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր տնօրենի նախաձեռնությամբ, Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

5.4. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են քոլեջի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժների համար, նրանք կարող են ներկա գտնվել նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.5. Քոլեջի տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից 3 օր առաջ պատշաճ կերպով տեղեկացնում է աշխատակիցներին մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Մանկավարժական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

5.6. Մանկավարժական խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ խորհրդի ընտրության ժամանակ՝ առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Յուրաքանչյուր անդամ ունի 1 ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

5.7. Խորհրդի անդամների ընտրությունն անցկացվում է փակ քվեարկությամբ: Ընդունված են համարվում 2 առավել ձայն հավաքած ներկայացուցիչները:

5.8. Մանկավարժական խորհրդի անդամների ձայների հավասար բաժանվելու դեպքում ընդունվում է տնօրենի առաջարկը:

5.9. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը ապահովում է տնօրենը և պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին՝ արդյունքների մասին:

5.10. Տնօրենն իրավունք ունի իրեն հայտնի դառնալուց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում անվավեր ճանաչելու մանկավարժական խորհրդի այն որոշումները, որոնց ինքը չի մասնակցել կամ դեմ է քվեարկել դրա մասին 5-օրյա ժամկետում՝ գրավոր հայտնելով լիազոր մարմնին և ուսումնական հաստատության խորհրդի անդամներին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այս կանոնակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ «Կրթության մասին» օրենքով, Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին օրենքներով, Քոլեջի կանոնադրությամբ, Քոլեջի այլ կանոնակարգերով և հիմնարար այլ իրավական ակտերով: